## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր   N 1

## ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի ՄԻՋԵՎ 19.06.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/32-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ, ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «   » «   » 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մարինե Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 19.06.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/32-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ապրանքների մատակարարումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Առաջին մատակարարումը իրականացվում է մինչև 20 օրացույցային օրվա ընթացքում, իսկ Մատակարարի համաձայնությամբ՝ հնարավոր է նաև ավելի սեղմ ժամկետում: Հետագա յուրաքանչյուր մատակարարումը իրականացվում է Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջը ստանալուց հետո՝ 3 օրացույցային օրվա ընթացքում: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է առանց համաձայնագիր կնքելու:

1.3. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատակարարման սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/32-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ
Հասցե՝ ք.Գյումրի, Մազմանյան 3բ
ՀՎՀՀ 05500411
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1570078724667200
Տնօրեն՝ Սահակ Հակոբյան

----------------------------------------

(ստորագրություն) Կ.Տ

Ստորագրող
ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
3711840906

2026-06-23 15:23:18 GMT+04:00
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Թումանյան 4/1
Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2050022244621001
ՀՎՀՀ 02704414

Ստորագրող
ԷԴՈՒԱՐԴ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
3909810691

2026-06-23 11:43:31 GMT+04:00
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID